ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-577-19.08.2014-SS-010/0*) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ողջունում է օրենսդրական նախաձեռնության հեղինակի՝ սահմանամերձ համայնքների բնակիչներին արտոնությունների տրամադրման, ինչպես նաև սոցիալական երաշխիքներով ապահովման նպատակադրումը: Ավելին, այդ նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի սեպտեմբերի 3-ի N 831-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որին մասնավորապես հանձնարարվել է՝

1) կատարել ներկայիս կարիքների զույգագրում.

2) սահմանամերձ համայնքների համար մշակել հարկային և սոցիալական արտոնությունների համակարգ.

3) նշված համակարգի ներդրման առանձնահատկությունները տարբերակելու նպատակով կատարել սահմանամերձ համայնքների դասակարգում:

Նշված աշխատանքների արդյունքում կձևավորվի արտոնություններ սահմանող օրենսդրական նախաձեռնությունների փաթեթ, որով սահմանամերձ համայնքների բնակչության շրջանում առկա խնդիրներին կտրվեն համապարփակ և ամբողջական լուծումներ: Միաժամանակ հայտնում ենք, որ խնդրի կարգավորման նպատակով առաջարկություններ ենք ստացել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի այլ պատգամավորներից, գերատեսչություններից և հասարակական կազմակերպություններից:

Հայտնում ենք նաև, որ ներկայացված նախագծում առկա են խնդիրներ՝ կապված օրենսդրական տեխնիկայի, ձևակերպումների և կարգավորումների հետ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի հեղինակին առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ օրենքի նախագծի քննարկումից և համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը միասնական և ամբողջական նախագծերի փաթեթ ներկայացնելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

**«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Սահմանապահ համայնքների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Սահմանապահ համայնքների մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Սահմանապահ համայնքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Սահմանապահ համայնքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանապահ համայնքների բնակիչները կազատվեն մի շարք հարկերից, ինչպես նաև լրացուցիչ օգնություն կտրամադրվի սահմանապահ համայնքի բնակիչների առողջապահական կարիքները հոգալու համար:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է սահմանապահ համայնքների բնակիչներին կոմունալ վճարների, հողի հարկի և գույքահարկի արտոնությունների և մի շարք այլ սոցիալական երաշխիքների տրամադրմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ընդհանուր առմամբ ազդեցություն ***չի նախատեսվում***:

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Եզրակացություն**

**«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Սահմանապահ համայնքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման և ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի փոփոխման, սակայն այն կոնկրետ հնարավոր չէ գնահատել՝ հաշվի առնելով նախագծով նախատեսվող դրույթների յուրահատկությունը:

Միաժամանակ, վերոնշյալ օրենքի նախագծի՝ թե՛ ընդունումը, թե՛ չընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների փոփոխման չի հանգեցնում:

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-577-19.08.2014-SS-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** Սույն օրենքի իմաստով Սահմանապահ համայնքներ են համարվում Հայաստանի Հանրապետության այն համայնքները, որոնց վարչական սահմանները ներառում են՝ Ադրբեջանի Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության սահմանից առավելագույնը երեք կիլոմետր հեռավորության վրա գտնվող բնակելի տներ կամ համայնքային նշանակության վարչական շենքեր:

Սահմանապահ համայնքների անվանական ցանկը՝ սույն օրենքով սահմանված չափանիշներին համապատասխան, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

***Հոդված 2.*** Սահմանապահ համայնքների բաժանորդների սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու եւ ոռոգման ջրի ամսեկան վարձավճարի 50 տոկոսը փոխհատուցվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից: Փոխհատուցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

***Հոդված 3.*** Սահմանապահ համայնքի բնակիչները ազատվում են Սահմանապահ համայնքի տարածքում ունեցած հողերի հողի հարկից եւ Սահմանապահ համայնքի տարածքում ունեցած անշարժ գույքի գույքահարկից:

***Հոդված 4.*** Սահմանապահ համայնքները ՀՀ պետական բյուջեից ստանում են լրացուցիչ օգնություն՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքի համար հաշվարկված դոտացիայի հարյուր տոկոսի չափով: Օգնությունը կարող է օգտագործվել բացառապես համայնքի ավագանու որոշմամբ՝ Սահմանապահ համայնքի բնակիչների առողջապահական կարիքները հոգալու, ինչպես նաեւ երիտասարդ ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու համար:

***Հոդված 5.*** Սահմանապահ համայնքների՝ Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետեւանքով օթեւանից զրկված բնակիչներին ՀՀ կառավարությունը ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մեկամսյա ժամկետում ապահովում է համարժեք օթեւանով՝ նույն համայնքի տարածքում:

***Հոդված 6.*** Սահմանապահ համայնքներում եւ դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից, ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետեւանքով վիրավորված ՀՀ քաղաքացիների բուժումն իրականացվում է պետպատվերով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով:

***Հոդված 7.*** Սահմանապահ համայնքներում եւ դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից, ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետեւանքով զոհված քաղաքացիների ընտանիքներին ՀՀ պետական բյուջեից տրվում է միանվագ օգնություն՝ 2 միլիոն դրամի չափով՝ հուղարկավորության ծախսերի համար:

***Հոդված 8.*** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Հայաստանի Հանրապետության օրենքը Սահմանապահ համայքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

«Հայաստանի Հանրապետության օրենքը Սահմանապահ համայքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ գտնվող համայնքների բնակիչներին սոցիալական որոշակի երաշխիքներով ապահովելու հրամայականով:

Նշված համայնքների բնակիչները գտնվում են կյանքին եւ գույքին սպառնացող մշտական վտանգի ներքո, ինչը էականորեն սահմանափակում է սեփական բարեկացությունը ապահովելու նրանց հնարավորությունը: Այս պայմաններում անհրաժեշտ է օրենքով արձանագրել ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ գտնվող համայնքների բնակիչներին կոմունալ մի շարք վճարների, հողի հարկի եւ գույքահարկի գծով արտոնությունների, ինչպես նաեւ եւ մի շարք սոցիալական երաշխիքների տրամադրումը, ինչը նախատեսված է սույն օրենքով: